

ՍԵՐՈՒՅ Ա. ՀԱԼՃԵԱՆ

# ԴԻՒԹՈՒԱԾ ՄԱՏԱՆԻԻՆ ԱՌԱՍՊԵԼԸ



ԹԱՐԴ. ՁԲՑՆԱՑԵՐԼԻՆՔ



ԿԸ ՆՈՒԽՐԵՄ ԵՂԲՈՐՄ  
ՍԱՐԳԻՍ Ա. ՇԱՀԱՅԻՆԻ  
ՆԻՆ-Եօրի

ԱՐԵՔԱԾՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐ. Ա. ԳԱՍՏՈՎԵԱՆ

1925

1 SEP 2016

ՍԵՊՈՒՀ Ա. ՇԱԼՑԵԱՆ

ԴԻՒԹՈՒԱԾ ՄԱՏԱՆԻԻՆ ԱՌԱՍՊԵԼԸ



ԹԱՐԳ. ՖՐԱՆՍԵՐԷՆԻ



ԿԸ ՆՈՒԻՐԵՄ ԵՂԲՈՐՄ  
ՍԱՐԳԻՍ Ա. ՇԱԼՑԵԱՆԻ  
Նիւ-Եօրֆ

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ  
ՏՊԱԳՐ. Ա. ԳԱՍՏԱՊԵԱՆ  
1925

## Ի Մ Խ Օ Ս Ք Ս

Նկատելով որ մեր գրականութեան մեջ առհասարակ կը պակսին մանկական վեպեր, յարմար դատեցի Թրան-սերենէ բարզմանել այս գրքոյիր, որ կը պարունակէ խիս հետարքաւորժ հեքեար մը :

Յուսով եմ թի ան պիտի գնահատուի ընթեցողներուս կողմէ, եւ առիք պիտի ընծայէ ինձի, ասոր նման ուրիշներ եւս բարզմանելու եւ հրատարակելու համար. եւ այս պիտի ընեմ պարզապիս, իմ հասակակից եղբայրներուս հանելի եւ օգտակար ժամանցներ ապահովելու առաջադրութեամբ :

Ս. Ա. Շ.



1-183591

## ԴԻՒԹՈՒԱԾ ՄԱՏԱՆԻԻՆ ԱՌԱՍՊԵԼԸ

կար ու չլար իշխանուհի մը կար , որ կ'անուանուէր Եօ-ՍՍն : Ճաբոնցի պատղիկ մ'էր աս , սակայն հիմուքանչ պատղիկ մը , որովհետեւ նա կրնար վաղել , խնդալ և խոսիլ այնքան լաւ , որքան գուշք կամ ես : Նա կ'իշխէր Վարզաշարհի թագաւորութեան վրայ . բայց , երբ դուք հարցնէք ձեր մօրը թէ , ո՞ւր կը գտնուի այս թագաւորութիւնը , նա չպիտի կրնայ ձեզ պատասխանել , ևս ձեզի պիտի ըստմ : Ան հաստատուած է ըշճանոյշներու երկրին մէջ : Նա ասկից շատ հեռու չէ , բայց ոչ ոք զիաէ տակաւին ճշգապէս թէ ուրկէ պէտք է անցնիլ հօն երթուրու համար . հիմա ունկն դրէ՛ք թէ ինչպէ՞ս գեղեցիկ և և գեռատի իշխանուհին կրցած է ունենալ գիւթուած մատանին :

Օր մը , մինչդեռ նա կը ճեմէր անստառներուն մէջ , ոչ շատ հեռու Վարզաշարհի թագաւորութենէն , նա հանդիպեցաւ ալիւոր հողապայի մը : Ան կը կալար , քանդի անոր ոտքին մէջ փուշ մը մխուած էր : Անիկա այնքան ձեր էր որ նոյն իսկ չէր կրնար ծոիլ գուրս քաշելու համար այն փուշը , որ իրեն սաստիկ ցաւ կը պատճաճառէր : Եօ-Սան բարի էր գաճաճը անոր վիշտ պատճաճեց , և ալնուօրէն , հանեց անոր ոտքին փուշը , ապա , իր ասեղնազրդուած գաշկինակով խնամքով՝ կապեց վիրաւորուած տեղը :

— «Յանունս չնորհակալութիւն, ըստ հոդապայը գուք այնքան բարի էք որքան զեղեցիկ. բայց ծառայութեան մը պատճառ կը դանայ, ընդունեցէք . . .»

Ու անոր երկարեց տարօրինակ բայց շատ գեղեցիկ մատանի մը: Սա զիմուած մատանին էր:

Առաջ, իշխանուհին վարանեցաւ ընդունիլ այս ընծան մէկէ մը, զոր չէր ճանչնար: Բայց ան այնքան բուռն կերպով աղաքց անոր չմերժել, որ վերջապէս համեցաւ ընդունիլ:

— Ասիկա մողական մատանի մ'է ըստ հոդապայը. մատանի մը մողական, զոր կարելի է զետեղել ամենաշղայլելի իշխանուհոյն նուրբ մատին, կամ առաջին գերակոպիս խոչըր մատի մը վրայ. և այն անձը որ զայն պիտի կրէ, մ'իշա երջանիկ կ'ըլլայ. ես ձեզ պիտի պատմեմ այս մատանիին պատմութիւնը, շարունակեց նա. ամէնէն առաջ զիտցէք որ իմ անունս է ԿՈՐԱԲԱՄԱԿ. ահա այսպէս կ'անուանէ զիս ամէն ոք, իմ ծերութեանս պատճառաւ: Ես նմանապէս շատ իմաստուն և զիտուն իմ և կը ծառայեմ սքանչելի իշխանի մը, ամենապեղեցիկը ու ամենաքաջը պարիկներու թագաւորութեան իշխաններէն:

— Իշխան Մադիկն է ան, հարցուց իշխանուհին:

— Բայց այո՛, աղաղակեց թղուկը, գուք կը ճանչնա՞ք միթէ զայն:

— Ո՛չ, ըստ իշխանուհին, բայց ես լսած եմ թէ ան որքան բարի և սրաստ է: Պատմեցէ՛ք ինծի քանի մը բան անոր մասին, շատ կը փափաքիմ հանդիպիլ անոր:

— Զեր ըղձանքը պիտի լսուի ձեր խորհածէն ալ

աւելի շուտ. բայց մտիկ ըրէք պատմութեանս շարունա կութեանը:

— «Ուրիմն օր մը, իշխանը կանչել առւաւ զիս և ըստ կորաքամա'կ, գուն իմաստուն ու խելամուտ ես. գուն ընդ երկար ծառայած ես ինձ հաւատարմութեամբ: Բայց զիս քանի մը բան ինծի համար . զտիր ինծի ամուսին մը: Ա՛ս այս մատանին, աշխարհքի մէջ ունեցած բանս այս է: Գտիր իշխանուհի մը արժանի ինծի: Այս բանին համար ան պէտք է ըլլայ ամենագեղեցիկը, լսւագոյնը և ամենասահմարելով:

«Երբ գուն զանիկա գտնես, տո՞ւր անոր այս խորագոհարը, և լաէ իրեն որ իշխան Մադիկը կը փափաքի զայն կութեան առնել: Ես քեզ պիտի վարձատրեմ մեծաշքօրէն: Ահա թէ ինչո՞ւ, իշխանուհի Եօ-Սան ես ձեզի առւի այս մատանին: և հիմակ մնաս բարեսւ, կարձ ժամանակամիջոցի մէջ կը վերտեսնուինք:»

Աւարտելով այս բաները թղուկն Կորաքամակ, անհետացաւ անտառին մէջ ցատկատելով: Եօ-Սան գրաւ մատանին իր մատը և զգաց ինքղինքը աշխարհքիս ամենասերջանիկ իշխանուհին:

Արդ, եղաւ օր մը որ, աեսան իշխանուհի Եօ-Սան նստած էր իր սենեակին մէջ, և կուլար չերմօրէն: Նա շատ գֆրալլ էր. կորսնցուցած էր զիւթուած մատանին: իր նաժիշտները զայն փնտասծ էին պալատին մէջ վերէն վար, բայց ապարդիւն:

Անոնք աչքէ անցուցին անտառները և մարգագետինները, պալէս զի բոլոր կենդանիները կարենան խմանալ. — «Իշխանուհի Եօ-Սան կորսնցուցած է իր մատանին: Մեծ վարձք անոր, որ զայն պիտի վերպանէ:»

Արդ, եղաւ որ մկնիկ մը, որ հանդարտօրէն պալատ կ'երթար, իշխանուհեռյն տանելու կողով մը վայրի մորմենի, լսեց աղախիններու պոռչտուքը. նա շտապեց պաւատ և վագեց շիփ շիտակ իշխանուհեռյն՝ գոչելով.

— Իշխանուհի, ես տեսայ զայն, ես տեսայ զայն:  
— Ի՞նչ տեսար, աղաղակեց իշխանուհին, ընդուարթնցած, որովհետեւ անիկայ լալով լալով քնացած էր:  
— Մատանին, ես մատանին տեսայ. սպատափանեց կաղկաձելով. այնքան ուժով որքան որ կրնար :

— Սիրելի՛ մկնիկս, աղաղակեց իշխանուհին, ձեռքերը գարնելով ուրախութեամբ. Ո՞ւր տեսար զայն, ըսէ՛ ո՞ւր . . .

Այն տաեն մկնկուհին պատմեց թէ ինչպէ՞ս տեսած էր մատանին պր. նապաստակի մատը, որ կը բնակի թագաւորին կաղնիին ստորոտը խոռոջի մը մէջ :

— Ես քեզի պիտի տամ ամբողջ աշխարհքի պանիրներն ու ամբողջ կաղնիները, եթէ գուն ուզես զիս առաջնորդել պր. նապաստակի քովը, ըստ իշխանուհին :

— Կը վախնամ որ չպիտի կրնամ ուտել ամբողջ կաղնիներն ու պանիրները. բայց ոչի՞նչ, ամէն պարագայի մէջ ես ձեզ պիտի ահաջնորդեմ :

— Դուն սիրուն մկնիկ մ'ես, օ՞ն, մեկնինք անմիշապէս :

Այսպէս առաջնորդուելով տիկին մկնիկէն, իշխանուհին մեկնեցաւ փնտուելու պր. նապաստակը, որ կ'ապրէր թագաւորին կաղնիին ստորոտը խոռոջի մը մէջ :

— Հեռո՞ւ է զեռ, մկնուհի, հարցուց իշխանուհին :

— Շա՛տ աւելի հետու. մենք հիմա անտառներուն մէջն ենք, ուր կը բուսնի թագաւորին կաղնին. միայն ես կ'առաջարկեմ որ քչիկ մը կենանք, որովհետեւ պր. նա-

պաստակը ընդհանրապէս կը քնանայ ցերեկը, և անազնուութիւն է զայն արթնցնել. և այսպէս ալ ըրին. անոնք երկուքնին ալ նստան, և մինչեւ մայրամուտ հալսպասի ուտելով հանգչեցան: Այն ատեն անոնք նորէն ճամբայ ելան և բնաւ չկեցան, մինչեւ թագաւորին կալնին հանսելնին: Սա ամենամեծ ծառն էր անստավին, և անոր ստորոտը, երկու արմատներու մէջուեղ, կը գրանուէր պր. նապաստակի որջը: Շքեղ որջ մըն էր: Ան ունէր մեծ մայրաճակատ մը, և ելքի գուռ մը ետեւի կողմէն, նորանշան պլտովիկ պաստուհան մը որուն տակը գըրաւած էին սա բառերը.

ՊՐ. ՆԱՊԱՍՏԱԿԻ. ՏՈՒԵՆ է ՄԱՅՐԱՄՈՒՏԷՆ ԵՑՔ

— Դաւք բնաւ երկրի տակը գոնուած էք առէկ առաջ, իշխանուհի, հարցուց տիկ մկնիկը :

— Ո՛չ, ըստ իշխանուհին :

— Լաւ, այն տաեն հետեւեցք ինծի և մի՛ վախնաք:

— Ես վստահ եմ թէ բնաւ չպիտի վախնամ, երբ որ գուք իմ հետս էք, ըստ իշխանուհին :

Մկնուհին լսոնարհեցաւ: Ան բացաւ յետոյ դռւուը, ներս մտցնելու համար իշխանուհին, և վերփակեց խնամքով, ինքն ալ իր կարգին անցնելէ ետքը:

Անոնք քափցին սև փափուղի մը մէջն, որ զերենք առաջնորդեց ուրիշ գուռ մը, պր. նապաստակի դահլիճին գուռը:

Մկնիկը բալխեց: Դուռը թափով բացուեցաւ չպիտի ծերունի պր.ի մը կողմէ, վայելչագէմ, երկար ականջներով և մեծ, բարի ու շատ քաղցր աչքերով: Սա ինքն պր. նապաստակին էր:

— Մաէ՛ք ըստ ան, խոնարհելով քաղաքավարու-

թիսամբ, և ձգելով որ անցնին իշխանուհին և մկնիկը :

— Ո՞հ, պլ. նապաստակ, զոչեց իշխանուհին, շատ զրգուած, ես կորսնցուցի իմ մատանիս, և տիկ մկնիկը ըստ թէ դուք զտած էք զայն : Դիւթուած մատանի մ'է ան, և ես բնաւ երջանիկ չպիսի ըլլամ եթէ չլիրզըտնեմ զայն :

Պլ. նապաստակը զլուխը քերեց և խոհուն կերպարնք մը առաւ :

— Ստուգիւ ես զտած եմ մատանի մը, իշխանուհի, բայց կ'անզիսամայի թէ ձերն է . և որովհնու չէի զիսեր թէ ինչ պէտք է ընել, ես զայն ծախեցի կոնակը խայթող պլ. ողնիին վեց շողզամի :

— Օ՞հ, որքան յուսահատ և դժբաղդ եմ, ըստ արտասուադին խեղճ իշխանուհի Եօ-Ման : Ի՞նչ պէտք է ընել հիմա . . . :

— Օ՞ն, վայրկեանին իսկ գոնենք կոնակը խայթող պլ. ողնին, ըստ տիկ մկնիկը :

— Անանկ, անանկ, զոչեց պլ. նապաստակը, որ կը շարժկուէր դիւրութեամբ : Ես ձեզի հոն պիտի առաջնորդեմ անցիջապէս :

— Ո՞վ է այդ պլ. ողնին . . . ո՞ւր կը բնակի ան . . . և ո՞ւր հաստատուած է անոր տունը . . . հարցուց իշխանուհին :

— Պլ. ողնին այն ծեր փշուտ պարոնն է, որ կը բնակի մացալին տակ, կալիններ և ջորեակներ կ'ուտէ, պատասխանեց պլ. նապաստակ :

— Պէտք է անմիջապէս երթաւ, մի՛ դուցէ ան ծախէ մատանին վեց ջորեակի համար, ըստ տիկ մկնիկը :

— Ո՞հ, այո՛, անմիջապէս, եթէ կը համերք ըստ իշխանուհին :

Պլ. նապաստակը իջեցուց իր լապտերը, որպէսզի իշխանուհին չկորսուի մթութեան մէջ, և ճամբայ ելան վնասելու կրնակը խայթող ողնին որ կը բնակէր ցանկի մը տակը և կ'ուտէր կալիններ ու ջորեակներ :

Բայց այս ցանկը հեռու էր, և իշխանուհին օրուան մը մէջ արէքան ճամբայ չէր քալած :

— Երկու իշխանուհի, ըստ տիկ մկնիկը, վստահաբար յոդնած էք :

— Ստուգիւ այցպէս է, պատասխանեց ան . բայց այն աստիճան կը տենչամ գոնելու իմ մատանիս, որ ուշագրութիւն չմմ ըներ առոր . ճիշտ այս վայրկեանին, պլ. նապաստակը անկեց իր ականչները և ըստ . լուս . . . :

Ամէն ոք լուց, որովհնաեւ բոժոժներու տկար ժիսը մը կը լսուէր :

— Սա ըլձնանուշներու իշխանին կառքն է, աղաղակնեց պլ. նապաստակը :

— Կ'ուղէ՞ք խօսիւ իշխան Սնդիկի հետ, հարցուց իշխանուհին :

— Այո՛ ըստ պլ. նապաստակը :

— Ի՞նչ պիտի ընեմ, ի՞նչ պիտի ըլլամ, ըստ իշխանուհին լալով . հիմա որ մատանին կորսնցուցի, անիկա այլեւո զիս չպիտի ընդունի իբրև կին :

— Այդ անոր մատանի՞ն էր, և դուք անոր նշանա՞ցն էք, հարցուցին պլ. նապաստակը և տիկ մկնիկը զարմանքի մատնուած :

— Այո՛, պատասխանեց իշխանուհին, և անոնց պատմեց իր զլխուն եկածը :

— Որքա՞ն սիրուն է նա , գոչեց մղնիկը : Իշխանը որքա՞ն բալբաւոր է . մի՛ վախնաք , մենք պիտի վերզըտնենք մատանին :

— Ճամբայ բացէ՛ք , ճամբայ բացէ՛ք , իշխանին կառքին համար , պատաց սլզովի թղուկ մը կարմիր հաղուծ (կորաքամակն էր նա) :

— Չեմ կրնար կենալ , ժամանակ չունիմ , ըստու , երբ պր . նապաստակը մօտեցաւ անոր , խօսելու համար :

Բայց այս վայրիկանին տեսաւ իշխանուհին լալազին :

Արդ , կորաքամակը բարի և աղնիւ էր . ան հրամայեց անմիջապէս կառքը քաշող պղտիկ օդողիներուն՝ որպէսզի կենան . և ցատկելով իր նոտարանին , վազեց գէպի մանկամարդ աղջիկը :

— Գեղեցիկ գաւակո , ի՞նչ կայ որ կուլաք , հարցուց ան աղնուօրէն :

Այս վայրկենիս նա ձանցաւ իշխանուհի Եօ-Սանը :

— Իշխանուհի՞ , աղաղակից . դուք ազերջանիկ էք . մատանի՞ն կորսնցուցիք :

— Այս , ըստ լալով խեղճ իշխանուհին , և անոր պատմեց թէ ինպէս ելած էր կոնակը խայթող պր . ողնին փնտուլու , որուն քովն էր մատանին :

— Ամէնքդ ալ կառքին մէջ ցատկեցէք , պոտաց թըդուկը . իշխանը պիտի սպասէ :

— Տի՛ն , իմ սիրուն օդողիներու , ճամբայ ելլե՛նք կոնակը խայթով ողնիին ընակարանը , որ կը բնակի սրափուշի ցանկին տակ . . . :

Զանգակները կը հնչէին զուարթօրէն , մինչ իշխանուհին և իր բարեկամները կը թաւալէին լուսնադարդ անտառներուն մէջէն :

Կառքը կանգնեցաւ յանկարծ :

— Ճամբայ տուէ՛ք , ձեզի եմ , ճամբայ տուէ՛ք , պատաց կորաքամակը : Իշխանուհի Եօ-Սանը , իշխանուհին վարդաշխարհի , պիտի միաւորի իշխան Մնդիկի հետ : Ո՞վ կընայ կանգնեցնել իշխանին կառքը :

— Չերդ վմեմութիւն , ըստ օդողիներէն մին , երկու անձններ կան , որ կը վիճին մատանիի մը և քանի մը կաղիններու ասթիւ :

— Ատիկա կոնակը խայթող ողնին պէտք է ըլլայ , ըստ իշխանուհին , անցընելով իր զլուխը կառքի գոնակէն :

— Ինձի բերէ՛ք զանոնք , ըստ կորաքամակը , այս ողնին պէտք է ըլլայ , դոր մենք կը փնտունք :

Այն ատեն կորաքամակի մօտը բերին (որովհետեւ նորինքն էր) :

— Ի՞նչ կրնայ ըլլալ ձեր գլուցոտքը , որպէսզի համարձակիք այսպէս զողել ճամբան իշխան Մնդիկի կառքին առջև , հարցուց ան :

Ճիշտ այս վայրկանին պղտիկ սկիւռ մը , որուն հետ պր . ողնին կը վիճաբանէր , ցատկեց կառքի աստիճանին վրայ :

— Չերդ մեծութիւն , աղաղակից ան , արդար էք : Թոյլատրեցէք ինձի բացատրելու որպէսզի արդարութիւն ստանամ :

— Տեսնե՞նք , ըստ կորաքամակը :

— Չերդ աղնուութիւն , կոնակը խայթող պր . ողնին մատանի մը ունէր , զոր մատուցած էր ինձի , ծախելու համար երկու կաղինի և չորս ջորեակի փոխարէն : Ես ընդունեցի , և անոր տուի ջորեակներն ու կաղինները : Եւ հիմայ կը մերժէ ինձի տալու մատանին :

— Ատիկա բոլորովին ագեղ է, ըստ կորաքամակը՝ դառնալով գէպի կոնակը խայթող ողնին. նախ և առաջ դուն իրաւունք չունիս ծախելու այս մատանին որ քեզի չի պատկանիր: Այդ կը պատկանի իշխան Մնդիկի: Ան զայն տուաւ իշխանուհի Եօ-Սանի, իր կինն ըլլալու պահանջով:

— Այս մատանին չկրնար վերաբերիլ իշխանուհոյն. ան շատ մեծ է անոր համար, պատասխանեց ողնին:

— Եւ եթէ անոր երթար, ի՞նչ պիտի ըսէիր դուն, ըստ կորաքամակ:

— Այդ պարագային, վատահարար իրենը պիտի ըլլար, պատասխանեց այս մասին ողնին հանգարատորէն. որովհետեւ մատանին իր զվին շուրջը կը կրէր՝ ան համոզուած էր որ, չափագանց լայն պիտի գար իշխանուհոյն նուրբ մատներուն:

Այն ատեն առաւ օղակը, զոր սահեցուց Եօ-Սանի մատը, որուն կատարելազէս կը յարմարէր:

— Իշխանուհի՛, կը ցաւիմ այս ամբողջ պատմութեան վրայ, ըստ այն ատեն ողնին ապշած, և ես երջանիկ եմ ձեզ վերադարձնելուս ձեր մատանին: կը վախնամ որ, օրինակի համար, չպիտի կրնամ վերադարձնել պր. սկիւոյն ջորեակներն ու կաղնիները, որովհետեւ ես զանոնք կերած եմ:

— Վնաս չունի, պատասխանեց պր. սկիւոը, պահեցէք ջորեակները և կը պարտիք ինձի կալինները:

— Հիմա, իշխանուհի, ըստ կորաքամակը, ես ստիպուած եմ երթալ գտնելու իշխանը, բայց, առաջ, ես ձեզի պիտի վերառաջնորդնմ ձեր պալատը, որպէս զի վաղն առաւոտ իմ տէրս կարենայ գալ և հոն փնտուել իր նշանածը:

— Յտեսութիւն ամենուուդ, ըստ իշխանուհին, կրկին ելլելով կառքը, և նաև շնորհակալութիւն, մասնին վերդանելու մասին ինձի սաստարած ըլլալնուդ համար. ես պիտի յիշեմ միշտ ձեր շնորհքը:

Կրկին կառքին զանգակները հնչեցին զուարթօրէն:

Հիմա իշխանուհին նորէն երջանիկ է, շնորհիւ հմայիչ մատանին և ամբողջ վարդաշխարհի թագաւորութիւնը զրոյցի մէջ է, որովհետեւ մերձաւոր լուսագէմին, իշխան Մնդիկը պիտի գայ ամուսնութեան խնդրելու Եօ-Սանը:

Գիշեր է. պալատին մէջ ամէն ինչ կը հանդարատի: Իշխանուհին և իր արքունիքը կը ննջն, բայց մեծ հմապարտէցին մէջ կ'սատասեն իշխանին դրկած պղտիկ լարախաղացները, պատրաստելու համար հակողութիւնը իր գրաւիչ նշանածին: Անոնք կը աեղաւորեն մոգական լոյսեր ամէն ծաներու վրայ, լուսաւորելու համար պարահանդէսը, որ տեղի պիտի ունենայ յաջորդ գիշերը, հարսանիքէն վերջ:

Աքաղաղին առաջին երգին, լսաւխաղցները կ'անհմտան և պալատը կը դառնայ ալաղկոտ և յուղիսալ. իշխանը ընդհուպ կը համանի, և երեք պատզամաւորներ թմբուկներով զետեղուած են պահապանի ձեռով պալատին աշտարակներուն վրայ, որպէսզի իշխանին և իր հետեւորդներուն ժամանումը խմացնեն: Ժամ մը ետքը, թըմբուկները հնչեցին, զուարթազին և պալատին վանդակորմերը բացուեցան փառաւոր կերպով, ձգելու համար որ անցնի ոսկեղարգ, փառաշուք կառքը:

Այն վայրկեանին, ուր շքակիրները գուռը կը հասնին, ամէն ոք կ'աղաղակէ. — «Ապրի՛ իշխան Մնդիկը և իշխանուհի Եօ-Սանը . . .»

Այն ատեն իշխանը կը ցատկէ կառքէն , և կը տեսնէ  
իր չքնազ նշանածը , որ կը յառաջնայ գէպի ինքը :  
Ամէն ոք համաձայն է որ երբէք այսքան գեղեցիկ զոյզ  
մը չէ տեսնուած :

Իշխանը կը խնդրէ իշխանուհիէն իր կինն ըլլաւ .  
յատոյ ան կանչէլ կուտայ կորաքամակը :

— Բա՛րեկամ , կ'ըսէ ան անոր , բաւական տարիներէ  
ի վեր գուն ինձի ծառայած ես խղճմտանօք և հաւասար-  
մօրէն : Տալով գիւթուած մասանին իշխանուհի Եօ-Սանի ,  
գուն ապացուցիր անդամ մը եւս քու խմաստութիւնով ,  
որովհեաւ ես բնաւ չեմ տեսած գեռատի աղջիկ մը առաւել  
սիրալի : Ես քեզ կը խօստանամ որ ոչ մէկ վարձատրու-  
թիւն չառ չպիտի ըլլայ գեղի համար Խօսէ՛ , ի՞նչ կ'ուզես :

— Շատ ազնիւ իշխանն , ձեր այսպիսի գեղանի իշ-  
խանուհի մը միացած ըլլալն է իմ վարձատրութիւնս ,  
պատասխանեց կորաքամակը : Հիմա իմ միակ խնդրանքս  
այն է որ ծառայեմ ձեզ երկուքնուել ալ , մինչեւ կեանքիս  
վերջին օրերը :

— Արդպէ՞ս ըլլայ , իմ հաւատարիմ կորաքամակս ,  
պատասխանեց իրեն իշխանը :

Իշխանուհին անմիջապէս մօտեցաւ և համբուրից ա-  
ւեսոր թզուկին երկու այտերէն և ամէն ոք սկսաւ աղա-  
ղակել : «Ապրի՛ կորաքամակը» :

Իմ մասիս , ես վստահ եմ որ կորաքամակը իշխանին  
հրաւիրեալներուն ամենասերչանին էր :

Այսպէս է որ ծաղկալի կեռասենիներուն տակ , պա-  
լատի ձեմապարէցին մէջ , իշխանը Գիւթուած Մատանին  
անցուց իր գեղանի իշխանուհոյն մատը : Եւ Եօ-Սան իշ-  
խանուհին գարձաւ իր երջանիկ կողակիցը . . .



NL0883795

1835